



## Զահրատ

### Ես մարգագետինը եւ օրիորդ խաղաղութիւնը

Հոն ուր ծովը կը վերջանայ ու եղեւնիներուն ետեւ  
մարգագետինը կը սկսի  
Օրիորդ Խաղաղութեան հետ թեւ թեւի  
պարելու գացի

Խոտերուն ու ճերմակ-դեղին մարգարտածաղիկներուն վրայ  
Պարեցինք շենք գիտեր քանի պար  
քանի տարի

Օր մըն ալ մայրամուտի մը  
Երբ քաղքին լոյսեր մէկ մէկ կը վառէին  
Հաստ կարմիր շրթներով կին մը նշմարեցի  
Ժպտեցաւ ինձի եւ ցուցադրեց գեղեցիկ գիստերը  
Ես Ձանձրոյթն եմ ըսաւ միալար ձայնով  
Մինչդեռ դեղնած խոտերուն ու թառամած ծաղիկներուն վրայ  
Օրիորդ Խաղաղութիւնը մեռաւ ինձմէ առաջ